



Վ. ԳԱՐՇԻՆ

ԱԶԳԱՆՇԱՆ

1937
ՊԵՏԿՐԱԾ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Վ. ԳԱՐՇԻՆ

Ա. Զ. Դ. Ա. Ն. Շ. Ա. Ն.

A $\frac{11}{38327}$

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարները
Վ. ԲՈՐՈՒԿԻՉԵՆԿՈՅԻ



19788



ՊԵՏՂՐԱՏ


ՀԻՎՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊՈՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Խմբագիր՝ Ռ. Ջ ա Ր Յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Լ. Ո ն ա ն Յ ա ն
Սրբագրիչ՝ Ռ. Ն շ ա ն Յ ա ն

Գրավիճի լիազոր Կ—4474, հաս. 3982

Պասվեր 108, սիրտ 3000

Վեհերաժի սպարան, Յերեվան, ԻԻ Կճուճյանցի, 4



Սեմյոն Իվանովը ծառայում էր լեռնաթուղում իբրև պահակ: Նրա տնակից մինչև մի կաշարանը տասնչերկու վերստ էր, մինչև մյուսը՝ տաս: Այդտեղից չորս վերստ հեռու անցյալ տարի մի մեծ մանարան բաց արին: Անտառի լեռներից սեխն էր տալիս նրա բարձր ծխնելույզը, իսկ ալեղի մոտիկ, բացի հարևան տնակներից, ել բնակութուն չկար:

Սեմյոն Իվանովը հիվանդ և քայքայված մարդ էր: Ինչը տարի առաջ նա լեղել էր պատերազմում. սպասավոր էր լեղել մի սպայի մոտ և նրա հետ մի ամբողջ արշավանք էր կատարել: Սովածութուն ել էր քաշել նա, սառնամանիքի տակ ել էր ընկել, արևի տակ ել էր խաշվել, ճանապարհ էր կտրել ամեն անգամ քառասուն, հիսուն վերստերով շոգին ու սառնամանիքին, լեղել էր նաև դնդակների տարափի տակ, բայց, փառք ասածո, վոչ մեկը չէր դիպել: Մի անգամ գունդը կանգնած էր առաջին ոսղմազծում: Ամբողջ մի շաբաթ տաճիկների հետ փոխադարձ հրաձգութուն էր տեղի ունենում. պառկած է մեր շղթան, իսկ ձորակի այն կողմը՝

տաճիկներինը, և առավոտից մինչև չերեկո կրակուսմ ե
 Սեմյոնի սպան նուշնպես ձորակումն եր: Ամեն որ, որա-
 կան չերեք անգամ Սեմյոնը ձորակի միջով գնդի խոհա-
 նոցներինց: տաք ինքնայեռ ու ճաշ եր տանում նրա հա-
 մար: Տանում ե ինքնայեռը բաց տեղով, գնդակները
 սուլում են, շրմփում քարերին, սարսափում ե Սեմյոնը,
 լաց ե լինում, բայց գնում ե: Պարոն սպաները շատ դոճ
 ելին նրանից, նրանք միշտ տաք թեյ ելին ունենում: Արշավանքից նա վերադարձավ անվլաս, միայն թևերն
 ու վոտքերն ելին սկսել ցավեր: Շատ տառապանքներ
 կրեց նա այն որվանից: Յեկավ տուն — ծերունի հայրը
 մեռավ, չորս տարեկան տղան նուշնպես մեռավ կոկորդի
 ցավից: Սեմյոնը մենակ մնաց իր կնոջ հետ: Բան դուրս
 չեկավ նաև նրանց տնտեսությունից, ասենք դժվար ել ե
 հողը վարել ուռած ձեռքերով ու վոտքերով: Այլևս իրենց
 գյուղում ապրելու հնար չուներին, գնացին նոր տեղեր՝
 բախտ վորոնելու: Սեմյոնն իր կնոջ հետ չեղավ և՛ դժի
 վրա, և՛ Խերսոնում, և՛ Դոնի կողմերում, բայց վոչ մի
 տեղ բախտը չբանեց: Կինն աղախին մտավ, իսկ Սեմյոնն
 առաջվա պես թափառում եր: Մի անգամ նա գնացքով
 տեղ եր գնում: Կայարաններից մեկում, տեսնում ե, կա-
 յարանապետը, կարծես ծանոթ ե: Նայում ե նրան Սեմ-
 յոնը, պետն ել ե գննում Սեմյոնի գեմքը: Ճանաչեցին
 իրար՝ բանից դուրս չեկավ, վոր իրենց գնդի սպաներից եր:

— Դու Իվանովն ես, — ասում ե:

— Ճիշտ այդպես, ձերդ բարեճնութուն, չես ինքս
 եմ վոր կամ:

— Դու վճնց ես ընկել այստեղ:

Պատմեց նրան Սեմյոնը՝ եսպես ու եսպես:

— Իսկ հիմի ուր ես գնում:

— Ինքս ել չեմ իմանում, ձերդ բարեճնութուն:

— Վճնց թե չես իմանում, հիմար:

— Ճիշտ այդպես, ձերդ բարեճնութուն, գյուլս գնե-

լու տեղ չունենմ: Հարկավոր ե, ձերդ բարեծնութլուն, վորևե աշխատանք վնտուել:

Նայեց նրան կայարանապետը, միտք արեց ու ասաց.

— Ահն ինչ, ախպերս, մնա առայժմ կայարանում: Դու, կարծեմ, ամուսնացած ես: Վորտեղ ե կինդ:

— Ճիշտ այդպես, ձերդ բարեծնութլուն, ամուսնացած եմ: Կինս կուրսկ քաղաքումն ե, ծառայում ե մի վաճառականի մոտ:

— Դե, վոր այդպես ե, դրիւր կնոջդ, թող գա: Ձրի տոմս կճարեմ: Այստեղ մեր չերկաթուղու տնակներից մեկն ազատվելու չե, քո մասին կինդդեմ ուղեշրջանի պետին:

— Շատ եմ շնորհակալ, ձերդ բարեծնութլուն, պատասխանեց Սեմյոնը:

Նա մնաց կայարանում: Ոգնում եր կայարանապետի խոհանոցում, փայտ եր շարդում, բակը, կառամատուցն եր ավլում: Մի շաբաթից հետո կինը չեկավ և Սեմյոնը ձեռքի սալակով դնաց իր տնակը: Տնակը նոր եր, տաք, վառելու փայտ ինչքան ուզես կար: Նախկին պահակներից ել մի փոքրիկ բանջարանոց եր մնացել, կես դեսպտինի չափ վարելահող ել կար չերկաթգծի չերկու կողմերում: Ուրախացավ Սեմյոնը: Սկսեց միտք անել, թե ինչպես տնտեսութլուն կսարքի իր համար, մի կով ու մի ձի կզնի:

Նրան տվին ամբողջ պետք չեկած սարքը՝ մի կանաչ որոշակ, մի կարմիր դրոշակ, լապտերներ չեղջուրիկ, մուրձ, բանալի — պնդողակներն ամրացնելու համար, նիզ բահ, ավելներ, բլրտեր, բեռներ, տվին չերկու կանոնագիրք և գնացքների չվացուցակը: Սկզբում Սեմյոնը գիշերներն ել չեր քնում, շարունակ չվացուցակն եր անգիր անում: Գնացքը գեռ չերկու ժամից հետո պլտի անցնի, իսկ նա շրջում ե իր գծամասը, նստում ե տնակի մոտ և միշտ նայում ու ականջ դնում, չէն դողում

արդյոք ուրիշ, չի՞ ազմկում գնացքը: Անգիր սովորեց նաև կանոնները: Չնայած լավ չէր կարգում, վանկ-վանկ, բայց և այնպես լավ սովորեց:

Ամառ էր: Աշխատանքը ծանր չէր, ձյուն մաքրել չկար, գնացքներ ել շատ չեյին անցնում այդ ճանապարհով: Շրջում է Սեմյոնն իր վերստը որեկան յերկու անգամ, փորձում է տեղ տեղ պնդողակներն ամրացնել, խիճն է հավասարեցնում, ջրի խողովակներն է նայում և տուն է գալիս իր անտեսութունը կարգի բերելու: Նրա անտեսութունում, սակայն, մի խոչնդոտ կար. ինչ վոր մտքին գնում է, վոր անի, այդ բոլորի մասին ճանապարհային վարպետին է խնդրում, իսկ նա ուղեշրջանի պետին է գեկուցում: Մինչև խնդրքը լետ է դառնում, ժամանակն անցնում է: Սեմյոնն ու իր կինը նույնիսկ ձանձրանալ սկսեցին:

Անցավ մի յերկու ամիս, Սեմյոնն սկսեց հարևան պահակների հետ ծանոթանալ: Նրանցից մեկը զառամյալ ծերունի չէր, վաղուց մտածում ելին նրան փոխել, հագլիվ եր անակից դուրս գալիս: Նրա փոխարեն կինն եր շրջում յերկաթուղում: Մյուս պահակը, վոր կայարանին ավելի մոտիկ եր, յերիտասարդ մարդ եր, ինքը նիհար ու ջլուտ: Առաջին անգամ Սեմյոնը նրան հանդիպեց յերկաթգծի վրա, յերկու անակների կես ճանապարհին, շրջագայության ժամանակ: Սեմյոնը գլխարկը հանեց, բարևեց:

— Բարի որ, — ասաց, — հարևան:

Հարևանը նայեց նրան կողքանց:

— Բարև, — ասաց:

Յետ դարձավ ու հեռացավ: Հետո ել կանաչք հանդիպեցին իրար: Բարևեց Սեմյոնի Արինան հարևանուհուն: Նա ել չուզեց շատ խոսել, թողեց գնաց: Մի անգամ ել Սեմյոնը տեսավ նրան:

— Եդ վճնց ե վոր, — ասում է, — քույրիկ ջան, բ՛ մարդը խոսելու հետ իսկի գլուխ չունի:



Սեմյոնը քե գլուզի և քե արեւականի մաշին եր պատմում:

Մի պահ լուռ մնաց կինը, հետո ասում է.

— Ե՛հ, ի՛նչ պիտի խոսի նա քեզ հետ: Ամեն մարդ իր ցամփն ունի... Գնա՛, աստված քեզ հետ:

Սակայն, անցավ ելի մի ամիս, ծանոթացան: Հանդիպում են Սեմյոնն ու Վասիլին չերկաթգծի վրա, նստում են չեղրին, ծխամորձ են ծխում ու պատմում իրար իրենց ապրուստի մասին: Վասիլին ավելի շատ լուռ եր մնում, իսկ Սեմյոնը պատմում եր և՛ իրենց գյուղի մասին, և՛ արշավանքի մասին:

— Յես իմ կյանքում, — ասում է, — քիչ դարդ ու ցավ չեմ քաշել, չնայած դեռ ենքան ել շատ չեմ ապրել: Աստված ինձ բախտ չտվեց: Գե ում ինչ վոր ճակատին գրել է տերը, ենպես ել պիտի լինի: Բնա, եսպես է, Վասիլի Ստեպանիչ:

Իսկ Վասիլի Ստեպանիչը ծխամորձը ունի թխկացնելով դատարկեց, վեր կացավ ու ասաց.

— Ե՛հ, ճակատի գիրը չի, վոր իմ ու քո կյանքն ուտում է, այլ մարդիկ են: Ես աշխարհում մարդուց ավելի գիշատիչ ու չար դազան չկա: Գայլը գայլին չի ուտում, իսկ մարդը մարդին վողջ-վողջ է ուտում:

— Ձե, ախպերս. գայլը գայլին ուտում է, եդ մի ասա:

— Խոսքի որինակ ասացի: Բաց ինչ ուզում ես ասա՝ մարդուց ավելի դաժան արարած չկա: Թե վոր մարդկային չարությունն ու ազահությունը չլինելին — ո՞վ չեր ապրի: Ամեն մեկը հենց ուզում է մսիցդ բռնի, մի լավ պատառ պոկի ու կուլ տա:

Մտքի մեջ ընկավ Սեմյոնը:

— Չգիտեմ, — ասում է, — ախպեր ջան: Գուցե և եդ պես է, — իսկ թե վոր եդպես ել է, ուրեմն հենց ասածուց է եդպես սահմանված:

— Իսկ թե վոր եդպես է, — ասում է Վասիլին, — ուրեմն մենք ել բան չունենք խոսելու իրար հետ: Մենք վոր

ամեն մի վատ բան աստծու վրա գցենք. ինքներս ել նստենք ու համբերենք, ուրեմն, ախպերս, մենք մարդ չպիտի լինենք, ալ անասուն: Ե՛ս ե իմ-ասածը:

Շուռ լեկավ ու գնաց, առանց հրաժեշտ տալու: Վեր կացավ և Սեմյոնը:

— Հարևան, — բղավում է, — բա ինչի՞ համար ես հայհոյանք անում:

Հարևանը լետ ել չնայեց, գնաց: Յերկար նայեց նրա լետից Սեմյոնը, մինչև վոր Վասիլին ծածկվեց ճանապարհի վոլորտում: Վերադարձավ տուն ու ասում է կնոջը.

— Վայ, Արինա, ինչ հարևան ունենք մենք՝ մարդ մի ասա, մի դե ասա:

Սակաչն, նրանք չխոտվեցին իրարից: Ելի հանդիպեցին և առաջվա պես խոսել սկսեցին, դարձյալ նույն բանի մասին:

— Ե՛, ե, ախպերս, թե վոր մարդիկ եսպես չլինելին... չելինք նստի լետ ու դու ես տնակներում, — ասում է Վասիլին:

— Ե՛, տնակն ինչ է վոր... վոչինչ, ապրել կարելի չե...

— Ապրել կարելի չե, ապրել կարելի չե... Այ, թե մարդ ես, դու ել... Շատ ես ապրել, քիչ սովորել, շատ ես նայել, քիչ տեսել: Աղքատ մարդու համար, ուզում ես տնակում, ուզում ես վորտեղ ել լինի, ապրուստ հըր է: Ուտում են քեզ էս գել ու գազանը: Ամբողջ հյուսթդ են քամում քեզնից, թե վոր ծերացար՝ դուրս կգցեն, վոնց վոր մի թերմացք, խոզերին կեր կանեն: Դու ինչքան առճիկ ես ստանում:

— Դե, քիչ է, ինչ խոսք, Վասիլի Ստեպանիչ: Տասներկու ուրլի:

— Իսկ լետ տասներեք ու կես: Դե թույլ տուր քեզ հարց տալ, ինչո՞ւ: Որենքով վարչութունից բոլորին ել հավասար է հասնում՝ ամիսը տասնհինգ ուրլի, վառելիք,

լուսավորութիւնն: Բա, ել սիլ ե ինձ ու քեզ համար տաս-
ներկու կամ թե տասներեք ու կես վորոշել: Թույլ տուր
քեզ հարցնել... Իսկ դու ասում ես՝ ապրել կարելի չե:
Դու հասկացիր, հո ետեղ խոսքը մեկ ու կես կամ չերեք
ուրբլու մասին չի: Թեկուզ հենց ամբողջ տասնհինգ ուրբլին
վճարելին: Կայարանումն էլի անցյալ ամիս: Դիրեկտորն եր
յեկել, տեսն իրեն: Եսպես մի պատիվ ունեցա: Գնում ե
իր համար առանձին վագոնով: Դուրս չեկավ կառամա-
տուլց, կանգնել ե... Ե՛հ, շատ չեմ մնա չես ալտեղ, չե,
կգնամ՝ ինչքան վոր աչքս կարի:

— Ախր ուր պիտի գնաս, Ստեպանիչ: Հեռվից ամեն
բան լավ ե չերևում: Եստեղ դու տուն ունես, տեղ ունես,
մի քիչ ել հող կա ձեռքիդ: Կինդ ել լավ աշխատում ե...

— Հոգ: Մի տեսնես դու իմ եդ հողը: Մի չոփ ել
չկա ենտեղ: Գարնանն ուղեցի կաղամբ տնկել, մեկ ել
տեսնեմ վարպետն՝ չեկավ՝ «Ե՛ս, ասում ե, լինչ բան ե:
Ինչո՞ւ առանց հայտնելու: Ինչո՞ւ առանց իրավունքի: Կը-
քանդես, ենպես, վոր հոտն ել չմնա»: Հարբած եր: Ուրիշ
անգամ բան ել չեր ասի, բայց եդտեղ սատանան մտավ
կողը... «Յերեք ուրբլի տուգանք»...

Լռեց Վասիլին, ծխամորձը քաշեց ու ասում ե կա-
մաց.

— Հենց քիչ եր մնացել, վոր պառկեցնելի տեղն ու
տեղը:

— Ե՛հ, հարևան, շատ տաքարցուն ես, այ, թե ինչ կա-
սեմ քեզ:

— Տաքարցուն չեմ, այլ ճշմարտութիւնն եմ խոսում
ու մտածում: Դեռ չես նրան կուտացնեմ, են կարմիր
ռեխին: Իրեն, ուղեշրջանի պետին պիտի գանգատ անեմ:
Յուլց կտամ չես նրան:

Յեվ ճիշտ վոր գանգատվեց:

Մի անգամ ուղեշրջանի պետն անցնում եր ճանա-

պարհն ստուգելու: Յերեք որ հետո նշանավոր մարդիկ պիտի գալին Պետերբուրգից՝ ստուգում կատարելու և մինչև նրանց գալը ամեն ինչ պետք եր կարգի բերել: Խճավազ լցրին, հավասարեցրին, կոճերն ստուգեցին, բեվեռները պնդացրին, պնդողակներն ամրացրին, սյուները ներկեցին, հրամայեցին անցումների տեղը դեղին ավազ լցնել: Հարևան պահակ կիսն իր հալիվորին ել դուրս քշեց խոտը մաքրելու: Աշխատում եր Սեմյոնն ամբողջ մի շաբաթ: Ամեն ինչ կարգի բերեց, իր բաճկոնն ել նորոգեց, մաքրեց, իսկ պղնձե ճարմանդը լավ փայլեցրեց աղյուսով: Աշխատում եր նաև Վասիլին: Ուղեշրջանի պետը յեկավ գրեզինով: Չորս բանվոր բռնակն ելին պլատեցնում, ժանանիվները վզոլում են, պանում ե սալակը ժամր քսան վերստ, վոնց են գվվում անիվները: Մոտեցան Սեմյոնի տնակին: Մոտ ցատկեց Սեմյոնը, գեկուցեց զինվորավարի: Ամեն ինչ կարգին եր:

— Դու վաղուց ես այստեղ, — հարցնում ե պետը:

— Մայիսի յերկսից, ձերդ բարեծնություն:

— Լավ: Շնորհակալ եմ: Իսկ հարցուր վաթսուենչորսերորդ համարում ո՞վ ե:

Ճանապարհի վարպետը (նա ել եր պետի հետ դրեզինով յեկել) պառասխանեց.

— Վասիլի Սպիրիդով:

— Սպիրիդով, Սպիրիդով... Դա հենց նա՞ լե, վորին անցյալ տարի դուք նկատողություն ելիք արել:

— Նա ինքն ե:

— Դե, լավ, մի կտեսնենք Վասիլի Սպիրիդովին:

Շարժվիր:

Բանվորները սղմեցին բռնակը: Դրեզինը ճամփա ընկավ:

Նայում ե Սեմյոնը դրեզինին ու մտածում՝ «Դեհ, մի խաղ պիտի խաղան հարևանիս գլխին»:

Մի չերկու ժամից հետո նա գնաց շրջագայելու։ Տեսնում է՝ գծի վրայով գալիս է մեկը, գլխի վրա էլ կարծես ինչ-վոր սպիտակ բան է չերևում։ Սկսեց դիտել Սեմյոնը — Վասիլին է։ Փայտը ձեռքին, մեջքին մի փոքրիկ կապոց, թուշն էլ թաշկինակով կապած։

— Հարևան, ես ո՛ւր եգպես, — բղավում է Սեմյոնը։

Մոտեցավ Վասիլին՝ դեմքն ալլալված, կավիճի պես սպիտակ, աչքերը վարենի փայլ են ստացել։ Խոսել սկըսեց — ձայնն ընդհատվում է։

— Գողաք եմ գնում, — ասում է, — Մոսկվա... Վարչուլթուն։

— Վարչուլթուն... Այ, թե ինչ։ Ուրեմն դանդաժտ պիտի անես։ Ե՛հ, թող, Վասիլի Ստեպանիչ, մոռացիր...

— Ձե, ախպեր, չեմ մոռանա։ Ուշ է արդեն, մոռանալ չի լինի։ Տեսնում ես, նա ենպես ապտակ խփեց, արջունլվա արեց։ Գանի կենդանի չեմ, չեմ մոռանա, չեմ թողնի եգպես։

Բռնեց Սեմյոնը նրա ձեռքը։

— Թող, Ստեպանիչ, ճիշտ եմ ասում. դրանից իսկի լավ բան չի դուրս գա։

— Ե՛հ, լավ բանս վորն է։ Ինքս էլ գիտեմ, վոր բան չի դուրս գա, ճիշտ ելիր ասում դու ճակատագրի մասին։ Ինձ համար լավ չի լինի, բայց արդարուլթյան համար, ախպերս, պինդ պիտի կանգնեմ։

— Ախր, մի ասա, ինչի՞ց դուրս չեկավ ես բոլորը։

— Դե, ինչից... Նաչեց ամեն ինչ, դրեզինից իջավ, տնակի ներսը նաչեց։ Յես արդեն գիտելի, վոր պիտի խիստ պահանջի՝ ամեն ինչ, վոնց վոր հարկն է, կարգի բերի։ Արդեն ուզում եր գնալ. իսկ լես գանդատս արի։ Նա էլ իսկուլն սկսեց բղավել՝ «Եստեղ ասում է, կառավարական ստուգում է, քո եսպես-ենպեսը, իսկ դու բանջարանոցի համար ես գանդատվում։ Եստեղ, ասում է»

գաղտնի խորհրդականներ կան, իսկ դու քո կաղամբով ես մեջ ընկնում»։ Յես չհամբերեցի, մի խոսք սասցի, ասենք այնքան ել վատ խոսք չեր, բայց դե նրան շատ վիրավորական թվաց։ Վոր չծեփեց... իսկ չես կանգնել եմ, կարծես հենց եղպես ել պէտք է։ Գնացին նրանք, խելքս զլուխս չեկավ, չերեսս լվացի ու ճամփա ընկա։

— Իսկ անակը, բա, վո՞նց կլինի։

— Կինս մնաց։ Աչքից բաց չի թողնի, ասենք իրենց հերն ել եմ անիծել իրենց ճանապարհի հետ։

Վեր կացավ Վասիլին, պատրաստվեց ճամփա ընկնի։

— Մնաս բարի, Իվանիչ, չգիտեմ դատաստան կգըտնե՞մ արդյոք։

— Միթե՞ վտաքով ես գնում։

— Կաշարանում սպրանքատարին կնստեմ, եգուց

Մոսկվա կլինեմ։

Հրաժեշտ տվին իրար հարեանները, գնաց Վասիլին և չերկար ժամանակ չեր չերևում։ Կինը նրա տեղն աշխատում եր, որ ու գիշեր չեր քնում։ Ձեռից գնացել եր բոլորովին, իր մարդու ճամփան նախելով։ Յերրորդ որը ընկնելու չեկավ անցավ։ Շոգեմեքենան, բազաժի վագոնը, հետո չերկու հատ առաջին կարգի, իսկ Վասիլին չկա։

Չորրորդ որը Սեմյոնը տեսավ նրա կնոջը։ Յերեսը արտասուքից ուռել է, աչքերը կարմրեր։

— Յեկե՞լ է մարդդ, — հարցնում է։

Կինը թափ տվեց ձեռքը, վոչինչ չասաց ու գնաց իրենց անակի կողմը։

Դեռ չերելա ժամանակ Սեմյոնը սովորել եր ուռնուց շփիներ շինել։ Ալըում է ուռնու փայտի միջուկը, ծակեր է բացում, վորտեղ հարկն է, ծալրին շփան է գնում ու ենպես լավ հարմարեցնում, վոր ինչ ուզում ես, ան էլ նվազիր։ Պարապ ժամանակը շինում եր նա եղ

շվիներից և ապրանքատար զնացքի ծանոթ կոնդուկտորի հետ ուղարկում քաղաք — շուկա: Ենտեղ նրան տալիս ելին հատին չերկու կոպեկ: Բեվիզիալից հետո չերբորդ որը նա կնոջը տանը թողեց՝ չերեկոյան ժամի վեցի զընացքը հանդիպելու, իսկ ինքը վերցրեց գանախն ու անտառ զնաց, ուռենու փայտեր կարի իր համար: Հասավ նա իր գծամասի ծայրը, — այդ տեղում գիծը միանգամից թեքվում էր, — իջավ թմբից ու զնաց անտառով դեպի ներքև: Կես վերստի վրա մի ճահիճ կար և նրա կողքին շատ լավ թփեր կային շվիների համար: Նա մի ամբողջ կապ փայտ կտրեց ու զնաց դեպի տուն: Գնում է անտառի միջով: Արևն արդեն իջել է: Խորը լուսթյուն է տիրում, լավում է միայն, թե ինչպես ճովողում են թըռչունները և խշխշում է վոտքի տակ չորափայտը: Մի քիչ էլ առաջ զնաց Սեմյոնը, շուտով և գիծը կլինի: Յեվ թըվում է նրան, կարծես ինչ-վոր մի ձայն է հասնում ալանջին՝ կարծես ինչ վոր տեղ չերկաթը լսվում են չերկաթին: Քալերն արագացրեց Սեմյոնը: Այդ ժամանակ նրանց գծամասում նորոգում չկար: «Ես ինչ կարող ե նշանակել», — մտածում է: Դուրս է գալիս անտառի չեղրը — առջևը չերկաթգծի թումբն է բարձրանում: Վերևում, գծի վրա մի մարդ է պաղել ու ինչ վոր բան է անում: Սկսեց կամացուկ վեր բարձրանալ Սեմյոնը՝ կարծում էր վորևե մեկը պնդողակ է գողանում: Տեսնում է — ես մարդն էլ տեղից չեղավ, ձեռքին մի նիզ կա: Բռնացրել է նիզը ռելսին, ու վոր չշարժեց մի կողմ: Մթնեց Սեմյոնի աչքի առաջը: Ուզում է բղավի — չի կարողանում: Տեսնում է՝ Վասիլին է, վազում է վերև, բայց նա նիզն ու բանալին առած թմբի մյուս կողմից գլորվում է ցած:

— Վասիլի Ստեպանիչ, ախպեր Չան, հողիս, չես դարձիր: Տու՛ր: նիզը: Ռելսը դնենք տեղը, վոչ վոք չի իմանա: Յետ պարձիր, փրկիր հողիդ ես մեղքից:



Մրնեց Նեմյոնի աչի առաջր, ուզում է բղավի — չի կարողանում։

Յեա չնայեց Վասիլին, զնաց դեպի անտառ:

Կանգնել ե Սեմյոնը տեղահան արած ուելսի մոտ, փայտերը ձեռքից վալը ընկան: Գնացքն ել, վոր հիմա գա, ապրանքատար չի, մարդատար ե: Յեվ կանգնեցնել ել չես կարող՝ դրոշակ չկա: Ռելան իր տեղը չես կարող դնել, դատարկ ձեռքերով բևեռները չես կարող խփել: Վազել ե պետք, անպայման վազել տնակն ու վորևե գործիք բերել: Տեր աստված, ոգնիր ինձ:

Վազում ե Սեմյոնը դեպի իր տնակը, շունչը կտըրվում ե: Վազում ե, և հենց են ե պիտի վալը ընկնի: Դուրս վազեց անտառից — մինչև տնակը հարյուր սաժեն ե մնացել, վոչ ավելի, լսում ե գործարանի շշակը սուլեց: Ժամը վեցն ե: Իսկ վեցից չերկու բուպե անց զնացքը կանցնի: Տեր աստված: Փրկիր անմեղ հոգիները: Կարծես հենց աչքի առաջը տեսնում ե Սեմյոնը՝ կգիտչի շոգեմեքենալի ձախ անիվը ուելսի բաց ծայրին, կցնցվի, կողքի վրա կընկնի, կսկսի կոճերը ջարդել ու ցրել տալ, իսկ եդտեղ հենց վոլորտան ե, կլորացումը, և թումբը, և խորուխյունն ել դեպի ներքև տասնմեկ սաժեն ե, իսկ ենտեղ, չերրորդ կարգի վազոնում ժողովուրդն իրար վրա չե լցվել, լիքը մանր չերեխաներ են... նստած են հիմա նրանք, վոչ մի բանի մասին չեն մտածում: Տեր աստված, մի խելք դիր գլուխս: Ձե, մինչև տնակը վազելու և չես դառնալու ժամանակ չկա:

Կանգ առավ Սեմյոնը, չես դարձավ, վազեց առաջվանից ավելի արագ: Վազում ե զրեթե ուշքը կորցրած: Ինքն ել չգիտի, ել ինչ պիտի լինի: Հասավ տեղահան արած ուելսին՝ իր փայտերի կույտն ընկած ե եդտեղ: Կուսցտով նա, վերցրեց մեկը, ինքն ել չի հասկանում ինչի համար, շարունակեց վազել: Թվում ե նրան, վոր արդեն գալիս ե զնացքը: Լսում ե հեռու սուլոցը, լսում ե ուելսերը համաչափ ու կամացուկ ցնցվել սկսեցին: Ել վա-

գելու ուժ չկա: Կանգ առավ սարսափելի տեղից հարյուր
սաժենի վրա: Եղտեղ կարծես լույս ծագեց նրա գլխում:
Վերցրեց նա գդակը, հանեց միջից մի չթե թաշկինակ,
կոշիկի ճաքից հանեց դանակը, խաչ հանեց լերեսը՝ տեր
աստված, կամքդ լինի:

Խփեց դանակով իր ձախ թևին արմունկից վերև:
Դուրս ցատեց արյունը, վազեց տաք հոսանքով: Թրջեց
ներանով իր թաշկինակը, ձգեց, հարթեց, կապեց փայտի
վրա ու պարզեց իր կարմիր դրոշակը:

Կանգնել է, դրոշակն է թափահարում, իսկ գնացքն
արդեն լերևում է: Չի տեսնում նրան մեքենավարը, շու-
տով կմոտենա, իսկ հարյուր սաժենի վրա չի լինի կանգ-
նեցնել ծանր գնացքը:

Իսկ արյունը հոսում է ու հոսում: Սեղմում է Սե-
մյունը վերքն իր կողքին, ուղում է բռնի աչք, բայց ա-
րյունը չի դադարում: Յերևի խորն է վիրավորել նա իր
ձեռքը: Գլուխը պտտվեց, աչքերի առաջ սև ճանճեր լե-
րևացին: Իսկ հետո բոլորովին սևացավ աչքերի առաջը:
Սկանչներում կարծես զանգեր են զողանջում: Չի տես-
նում նա գնացքը, և չի լսում աղմուկը: Մի միտք կա
գլխում՝ «Ձեռն դիմանա, վեր կընկնեմ, դրոշակը վեր կը-
գցեմ, կանցնի գնացքն իմ վրայով... ոգնիր տեր աստված,
մի մարդ ուղարկիր ինձ փոխարինելու»...

Ու սևացավ նրա աչքերի առաջ և դատարկութունը
տիրեց հոգուն և նա վայր գցեց դրոշակը: Բայց դետին
չընկավ արյունոտ դրոշակը՝ մի ինչ վոր ձեռք բռնեց աչք
ու բարձր պահեց մոտեցող գնացքի հանդեպ: Մեքենա-
վարը տեսավ աչք, փակեց կարգավորիչը և բացեց հակա-
շողին: Գնացքը կանգ առավ:

Դուրս թռան վազոնից մարդիկ, խռնվեցին եղտեղ:
Տեսնում են՝ պառկել է մի մարդ, ամբողջովին արյուն-




A 3832x
19788

Նոսոված, ուշաթափ, մի ուրիշն էլ կանգնել և նրա մտտ
արյունոտ լաթով փաշար ձեռքին:

Նայեց Վասիլին բոլորի վրա, կախեց գլուխը:

— Կապեցեք ինձ, — ասում է, — լես եմ տեղահան արել
ուելը:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038327

[084]

ФРВР 50 Ч.

A $\frac{\bar{\Pi}}{38327}$

В. ГАРШИН
СИГНАЛ
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН